ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԷԼԻԶԱ ՌԱՖԻԿԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ (ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԻԴ.03.02. «Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ДУРГАРЯН ЭЛИЗА РАФИКОВНА

АНАЛИЗ И ОЦЕНКА ГЕОГРАФИЧЕСКИХ ФАКТОРОВ С ЦЕЛЬЮ РАЗВИТИЯ ТУРИЗМА (НА ПРИМЕРЕ СЮНИКСКОГО МАРЗА РА)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата географических наук по специальности 24.03.02 - “Экономическая, социальная и политическая география”

ЕРЕВАН – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝
աշխ.գիտ.թեկնածու,դոցենտ ՄԻՏՈՒՇ ՄԱՐՏԻՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
աշխ.գիտ.դոկտոր,պրոֆեսոր ՄԱՔՍԻՄ ԳԱՌՆԻԿԻ ՄԱՆԱՍՅԱՆ
աշխ.գիտ.թեկնածու,դոցենտ ՅՈՒՐԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Առաջատար հիմնարկ՝ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016թ-ի. ապրիլի 22-ին, ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող «Երկրագիտության» 005 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան, 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2016թ.մարտի 22 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
երկրաբ.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ ՄԱՐԱՏ ԱՐԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:
кандидат геогр. наук, доцент МИТУШ МАРТИНОВИЧ ТОРОСЯН

Официальные оппоненты:
доктор геогр. наук, профессор МАКСИМ ГАРНИКОВИЧ МАНАСЯН
кандитат геогр. наук, доцент ЮРИК АЙКАЗОВИЧ МУРАДЯН

Ведущая организация: Гюмрийский государственный педагогический институт им. М. Налбандяна

Защита состоится 22 апреля 2016г. в 14^{30} часов на заседании Специализированного совета 005 “Науки о Земле” при Ереванском государственном университете.
Адресс: 0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 22 марта 2016г.

Ученый секретарь Специализированного совета
кандидат геолого-минер.наук,доцент МАРАТ АРИСОВИЧ ГРИГОРЯН

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արդիականությունը: Զբոսաշրջությունը ՀՀ-ում այժմ առաջատար դեր ունի, քանի որ ճանաչվել է տնտեսության երեք առաջատար ճյուղերից մեկը, և մասնավորապես դրա զարգացման համար կարևորվում են մարզերի ներգրավվածությունը: Սյունիքի մարզը աչքի է ընկնում հարուստ զբոսաշրջային ռեսուրսներով և ունի բարենպաստ աշխարհագրական դիրք: Այստեղ առկա է զբոսաշրջության զարգացման փոխկապակցված սոցիալ-տնտեսական խնդիրների այն անհրաժեշտ բազմազանությունը, որոնք ի մի վերցրած Սյունիքի մարզը դարձնում են հետազոտության մոդելային տարածք: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջության կայուն զարգացումը հանդիսանում է ՀՀ կառավարության տնտեսական ծրագրերի գերակա խնդիրներից մեկը, և կոչված է տարածքային համաչափ և կայուն զարգացման, զբոսաշրջային ներուժի բացահայտման, հանգստի և զբոսաշրջային ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակով աշխատանքում զբոսաշրջային գործոնների քննարկումը կատարվում է համալիր՝ բնական, սոցիալ-տնտեսական ասպեկտներով և իրենց ենթակառուցվածքներով:

Նպատակը: Հետազոտման նպատակն է՝ վերլուծել զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների օգտագործման հնարավորությունները, բացահայտել Սյունիքի մարզում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման հեռանկարային ուղղությունները և տալ դրա սոցիալ-տնտեսական նշանակությունը:

Խնդիրները: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. Հիմնավորել զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների ուսումնասիրման տեսական և մեթոդական հարցերը:
2. Վերլուծել Սյունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսային ներուժը, ցույց տալ առանձին բաղադրիչների դերը զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման մեջ:
3. Բացահայտել Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ զբոսաշրջության ունեցած դերն ու ներուժային հնարավորությունները:
4. Պարզել Սյունիքի մարզի զբոսաշրջային ինդուստրիայի ուղղությունները, դրանց տարածքային կառուցվածքը և զարգացման տեսլականը:
5. Բացահայտել Սյունիքի մարզում զբոսաշրջային կլաստերների ձևավորման և գյուղական համայնքային զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը Սյունիքի մարզի զբոսաշրջության աշխարհագրական գործոններն[1] են, առարկան՝ Սյունիքի մարզի զբոսաշրջային ներուժի աշխարհագրական նախադրյալների համակարգը ու դրանց կիրառումը զբոսաշրջության մեջ:

1. «Աշխարհագրական գործոն» հասկացությունը ատենախոսությունում մեր կողմից օգտագործվում է որպես զբոսաշրջության տարածքային կազմակերպման բնական, մարդածին պայմանների ու ռեսուրսների ընդհանրություն ձևավորող գործիք (գործոն):

Մեթոդաբանական հիմքը և օգտագործված մեթոդները: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական հետազոտողների աշխատություններում կիրառված մեթոդները, ինչպես նաև մասնագիտական գրականությունը, զբոսաշրջության ոլորտին առնչվող ՀՀ իրավական ակտերը, միջազգային կազմակեպությունների հետազոտական, վերլուծական և մեթոդաբանական նյութերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության զբոսաշրջության վերաբերյալ տվյալները: Հետազոտության մեջ կիրառվել են համակարգային, տարածական, համեմատական վերլուծության ու քարտեզագրական մեթոդները: Պաշտպանության ներկայացվող մեր սույն աշխատությամբ փորձ է արվել համալիր մեթոդաբանական հնարավորությունների օգնությամբ բացահայտել Սյունիքի մարզում աշխարհագրական գործոնների կարևորությունը զբոսաշրջության զարգացման գործում:

Գիտական նորույթը: Ատենախոսության մեջ հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և կիրառական բնույթի հետևյալ կարևոր գիտական արդյունքները.

- Առաջին անգամ կատարվել է Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների համալիր վերլուծություն:
- Բացահայտվել են Սյունիքի մարզում զբոսաշրջային ներուժի առանձին բաղադրիչների դերը զբոսաշրջության զարգացման մեջ:
- Որոշարկվել է զբոսաշրջային ինդուստրիայի նշանակությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
- Վերլուծվել և գնահատվել են մարզի զբոսաշրջային ինդուստրիայի հիմնական ուղղությունները և տրվել է դրանց զարգացման տեսլականը:
- Կատարվել է Սյունիքի մարզի զբոսաշրջային աշխարհագրական իրավիճակի վերլուծություն ըստ զբոսաշրջային կլաստերների:
- Ուսումնասիրվել են գյուղական համայնքային զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

Պաշտպանվող հիմնադրույթները.

Հիմնավորված է, որ Սյունիքի մարզում առկա են աշխարհագրական հիմնական գործոնները, զբոսաշրջության տարբեր ճյուղերի ձևավորման ու զարգացման համար:

- Որոշված են Սյունիքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքները, որոնք կարևոր են զբոսաշրջային ինդուստրիայի տարածքային կազմակերպման համար:
- Բացահայտված և հիմնավորված է, որ մարզի գյուղական բնակավայրերը ունեն զբոսաշրջային ներուժի յուրահատուկ գծեր տուրիստական շուկայի ձևավորման համար:
- Բացահայտված են մարզի զբոսաշրջային այն ռեսուրսները, որոնք կարևոր գործոններ են զբոսաշրջային կլաստերների ձևավորման և համաչափ զարգացման համար:

Փորձաքննությունը և հրատարակված աշխատանքները: Թեմայի շուրջ զեկուցվել և տպագրվել են մի շարք հանրապետական գիտաժողովների նյութերում՝ պրոֆեսոր «Ս.Պ. Բալյանի 95 ամյակին նվիրված գիտաժողովում»,

Երևան, ԵՊՀ, 2007, պրոֆեսոր «Պ.Ս. Բոշնաղյանի ծննդյան 90 ամյակին նվիրված գիտաժողովում», Երևան, ԵՊՀ, 2011, պրոֆեսոր «Լ.Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված գիտաժողովում», Երևան, ԵՊՀ, 2011, Կրթությունը և գիտությունը Արցախում(3-4), Երևան 2014, «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողով (նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին), Երևան, ՀՊՄՀ, 2015, ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, «Հանրապետական գիտաժողովի նյութեր», Երևան, ԵՊՀ, 2015:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է յոթ հոդված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված 96 անուն գրականության ցանկից, 26 աղյուսակից, 13 նկարից: Ատենախոսության ամբողջ նյութը շարադրված է 143 էջի վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, հետազոտությունների նպատակն ու խնդիրները, ելակետային տվյալներն ու մեթոդները, գիտական նորույթը, պաշտպանվող հիմնական դրույթները և կիրառական նշանակությունը:

Գլուխ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնները: Նախկին Խորհրդային տարիներին զբոսաշրջության ոլորտի համար կատարվել են մի շարք հրապարակումներ, որոնցից ուշագրավ են Ն.Տ.Միրոնենկո, Ի.Տ. Տվերդոխլեբով, նրանց ուսումնասիրությունները նվիրված են տարածքային ռեկրեացիոն գաղափարին: Հեղինակներից՝ Ա.Բ.Բրեդիխին, Օ.Ա.Բարսուկ, Յ.Պ.Սուպրրունենկո, Բ.Բ.Խրաբովչենկո, Օ.Զ.Բայտերյակով, Ա.Գ.Նիզամին լեռնային շրջանների ուսումնասիրման մեջ գնահատել են բնական նախադրյալները և տվել զարգացման ուղիները: ՀՀ անկախության տարիներից մինչ այժմ, քիչ են կատարվել զբոսաշրջության ոլորտին նվիրված աշխատանքներ: Առանձին աշխատություններից կարևորվում են Է.Յ.Օրդինյանի, Մ.Ա.Սահակյանի, Ա.Վ.Բաղալյանի աշխատությունները, որոնցում քննարկվել են հիմնականում ՀՀ անցումային տնտեսության կարգավորման խնդիրները զբոսաշրջության ոլորտում և տրվել են դրանց հաղթահարման ուղիները: Մեր կողմից փորձ է արվել՝առաջին անգամ ՀՀ տարածքի Սյունիքի մարզի օրինակով ցույց տալ զբոսաշրջային գործոնների համալիր ուսումնասիրություն՝ բնական, սոցիալ-տնտեսական ասպեկտներով և իրենց ենթակառուցվածքներով:

Քանի որ զբոսաշրջության զարգացումը մեծապես կախված է աշխարհագրական գործոններից, հետևաբար աշխատանքում վերլուծվել են արտաքին և ներքին գործոնները: Արտաքին գործոններից քննարկվել են՝

բնական, պատմամշակութային, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, քաղաքական իրավական, տեխնոլոգիական և բնապահպանական հիմնահարցերը: Զբոսաշրջության ներքին գործոնները կապված են տնտեսության ներսում տեղի ունեցող երևույթների հետ: Դրանք նպաստում են զբոսաշրջային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի զարգացման գործին: Զբոսաշրջության վրա ազդող կարևորագույն գործոններից է սեզոնայնությունը: Այն կարևորվում է ժամանակի ոչ մեծ միջակայքերում զբոսաշրջային հոսքերի *համակենտրոնացմամբ:* Լայն տարածում ունի «բարձր սեզոնայնություն» հասկացությունը, որը ընդգրկում է ամռան (հուլիս, օգոստոս) և ձմռան (հունվար, փետրվար) ամիսները: Զբոսաշրջության որոշ տեսակներ ենթակա չեն սեզոնայնության ազդեցությանը որոնցից են՝ (ճանաչողական, գործնական, բուժական և գիտական) ուղղությունները:

Զբոսաշրջության դերը տնտեսության մեջ: Զբոսաշրջությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը: Այդ առումով զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը, հայտարարվել է ՀՀ տնտեսության առաջատար ճյուղերից և սկսած 1998թ. գտնվում է համապատասխան գերատեսչությունների ուշադրության ներքո: Զբոսաշրջության մրցունակության 2013թ.-ի վարկանիշային 140 երկրների շարքում, մեր երկիրը զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը: Հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայքի տվյալները, ցույց է տրվել՝ ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության աճի դինամիկան՝ (նկ. 1):



Նկ. 1 ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության աճի դինամիկան 2001-2013թթ.

Շնորհիվ ՀՀ-ում վարվող պետական քաղաքականության, պետություն-մասնավոր հատված-սփյուռք համագործակցության, վերջին տարիներին արձանագրվել է թե' քանակական և թե' որակական աճ: Այսօր ուրվագծվում է

Հայաստանի դիրքորոշումը որպես մշակութային զբոսաշրջային երկիր: Գլուխ 1-ում քննարկված տեսա-մեթոդական մոտեցումները հիմնականում վերաբերվում են ընդհանուր զբոսաշրջության տեսությանը: Մեր կողմից փորձ է արվել Սյունիքի մարզի օրինակով ցույց տալ այն դինամիկան, որը կնպաստի տարածաշրջանի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը: Վերլուծության ժամանակ օգտագործվել է աշխարհագրական հետազոտության համար հիմք հանդիսացող մեթոդներն ու մոտեցումները: Աշխատանքում դիտարկվել են համակարգային, կլաստերային, հիմնախնդրային վերլուծության ու քարտեզագրական մեթոդները: Համակարգային մեթոդի միջոցով մարզի տարածքը դիտարկվում է որպես մի ամբողջական միավոր: Կլաստերային մոտեցման շնորհիվ վեր է հանվել Սյունիքի մարզի վարչական միավորների զբոսաշրջային ռեսուրսները, որոնք կնպաստեն մարզի զբոսաշրջության հետագա կազմակերպմանը:

Գլուխ 2. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջային ներուժի բնութագիրը: Զբոսաշրջային ներուժի որոշումը համարվում է Սյունիքի մարզի կազմակերպման ժամանակակից կարևոր հիմնախնդիրներից:



Նկ. 2 Տարածքի զբոսաշրջային ներուժի կառուցվածքը՝ (ըստ Ա.Ս.Կուսկովի)

Տարածքի զբոսաշրջային ներուժն իր մեջ ներառում է զբոսաշրջային ռեսուրսները և զբոսաշրջային ենթակառուցվածքը՝ (նկ. 2): Մասնագետների կողմից օգտագործվում է նաև զբոսաշրջային ռեկրեացիոն ռեսուրս հասկացությունը, որի մեջ են դասվում տարածաշրջանի բնակլիմայական, պատմամշակութային, տեսարանային, հնէագիտական, ճարտարապետական և այլ օբյեկտներն ու երևույթները:

Մեր կարծիքով զբոսաշրջության ռեսուրսային բազան զբոսաշրջային ռեկրեացիոն ռեսուրսներն են, որոնք փոխկապակցված են իրար հետ: Հիմք

ընդունելով Ա.Ս.Կուսկովի տեսությունը զբոսաշրջության ռեսուրսային բազան Սյունիքի մարզում արտահայտվել է հետևյալ կերպ:

Զբոսաշրջության բնական ռեսուրսներ: Զբոսաշրջության բնական ռեսուրսները Սյունիքի մարզում մեծ դեր ունեն, որոնցից են.

- ռելիեֆի երկրաձևաչափական առանձնացումները,
- կլիմայական ռեսուրսները,
- ջրային ռեսուրսները, այդ թվում հանքային աղբյուրները,
- կենսաբազմազանություն և լանդշաֆտների գոտիականությունը,
- բնության հուշարձանները:



Նկ. 3 Սյունիքի մարզի ռելիեֆի հորիզոնական մասնատվածությունը (ելակետային տվյալներն ըստ Ֆ.Ս. Գևորգյանի)

Ռելիեֆի երկրաձևաչափական առանձնացումներ: Աշխարհագրական հետազոտության մեջ զբոսաշրջային ռեսուրսների համար կարևորվում է ռելիեֆի նշանակությունը: Զբոսաշրջության տեսանկյունից ռելիեֆը հանդես է գալիս մի դեպքում որպես պայման, մյուս դեպքում որպես ռեսուրս: Սյունիքի մարզի տարածքի մակերևույթը որպես զբոսաշրջության զարգացման պայման աչքի է ընկնում ռելիեֆի բազմազան ձևերով և առավել մասնատվածությամբ: Տարածքում ըստ *հորիզոնական մասնատվածության* առանձնացվում են՝ չմասնատված-21%, թույլ մասնատված-5,3%, միջին-14,1%, ուժեղ-53,5% և խիստ մասնատված-6,1% մակերևույթ ունեցող տեղանքներ (նկ.3): Ռելիեֆում տեղ գտած մյուս առանձնահատկությունը տարածքի կողմնադրույթներն են:

Հիմք ընդունելով Բ.Բ. Խրաբովչենկոյի տեսությունը, գնահատել ենք մարզի տարածքում մի շարք լեռների դիրքադրությունները, տվել զբոսաշրջային երթուղիների ուղղությունները:

Կլիմայական զբոսաշրջային ռեսուրսներ: Ենթաբաժնում վերլուծվել են տարածքի այն կլիմայական պայմանների ամբողջությունը, որոնք նպաստավոր են Սյունիքի մարզում զբոսաշրջության և հանգստի տարբեր ձևերի կազմակերպման համար: Մեր կողմից կատարված վերլուծությունների հիմքում ընդունելով Ռ. Մկրտչյանի և Ֆ. Հայրապետյանի կազմած «ՀՀ բնության օրացույցը»-ի ջերմային տվյալները, տրվել է Սյունիքի մարզի զբոսաշրջության հարմարավետ ջերմային սեզոնները՝ Սիսիանի, Գորիսի տարածաշրջանների համար դրանք համարվում են ամռան և աշնան ամիսները (ընդհանուր առմամբ՝ 77-91օր) տևողությամբ: Կապանի շրջանի համար այն ավելի քան 120օր է, կամ ընդգրկում է տարվա երեք սեզոնները, իսկ Մեղրիի շրջանում բոլոր եղանակները, կամ ամբողջ տարին:

Ջրային զբոսաշրջային ռեսուրսներ: Հանգամանալից վերլուծվել են Սյունիքի մարզում գետերի, լճերի, ջրամբարների, հանքային և քաղցրահամ աղբյուրների բնութագրիչները: Սյունիքի մարզի լեռնային գետերը կարևորվում են որպես զբոսաշրջային ռեսուրսներ, քանի որ աչքի են ընկնում բարենպաստ կլիմայական պայմաններով: Լեռնային արագահոս և սահանքավոր գետերը՝ Որոտանը և Ողջին հնարավորություն են տալիս զբաղվելու ջրային սպորտաձևերով՝ ռաֆթինգով:

Կենսաբազմազանություն: Սյունիքի մարզն աչքի է ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ, որտեղ գերակշռում են էնդեմիկ և ռելիկտային բույսերն ու կենդանիները: Կենսաբազմազանության յուրօրինակ համակեցությունները վաղուց ի վեր դարձել են զբոսաշրջության կազմակերպման կարևորագույն օբյեկտներից: Շիկահողի սոսիների պուրակը Անդրկովկասի անտառային ֆլորայի պատմության համար ունի բացառիկ նշանակություն: Սյունիքի մարզի շուրջ 20%-ը զբաղեցնում են անտառային բուսականությունը: Անտառներով ամենից հարուստ շրջանը Կապանն է՝ տարածքի շուրջ 38%-ը, իսկ անտառներով ամենաաղքատ շրջանը Սիսիանն է՝ 0.57%-ը: Շնորհիվ անտառային բուսականության համակեցությունների, Սյունիքի մարզը աչքի է ընկնում մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներով որոնցից են՝ Շիկահողի, Գորիսի, Բողաքարի արգելավայրերը ինչպես նաև Ծավի և Սև լճի արգելոցները: Վերջին տարիներին Մեղրու տարածաշրջանում ստեղծվել է «Արևիկ» ազգային պարկը: Բնության հատուկ պահպանվող այս տարածքներում կարելի է կազմակերպել զբոսաշրջության այնպիսի ուղղություններ ինչպիսին է՝ էկոտուրիզմը:

Բնության հուշարձաններ: Սյունիքի մարզը իրավամբ համարվում է բնական հուշարձանների թանգարան: Տարածքի ռելիեֆի բարդ կառուցվածքը, մակերևույթի խիստ մասնատվածությունը, պայմաններ են ստեղծել բնական բազմազան հուշարձանների առաջացմանը: Այստեղ հրաբխային լավային հոսքերը զբաղեցնում են տարածքի շուրջ ¼ մասը: Լավային հոսքերից լայն տարածում ունեն բազալտային և անդեզիտաբազալտային սյունաձև գոյացությունները՝ հատկապես Որոտանի կիրճում:

Եզակի օրինակ է Գորիս քաղաքի տարածքում գտնվող քարային բուրգերը, որոնց առաջացման պատճառը հողմահարումն է: Քարանձավ բնակատեղիներ կան ՀՀ այլ շրջաններում, սակայն բնակելի քարայրների թիվը գերազանցում է հազարից միայն Խնձորեսկ, Տեղ, Քարաշեն և այլ գյուղերի տարածքում: Հին Խնձորեսկի ողջ տարածքն իր պատմամշակութային գոտիներով կարող է վերածվել բացօթյա թանգարանի, որը կդառնա մարզի համար զբոսաշրջության ակտիվ կենտրոններից մեկը:

Պատմամշակութային ռեսուրսներ: Պատմամշակութային ռեսուրսների գնահատումը ՀՀ-ում, մասնավորապես Սյունիքի մարզում մեծ նշանակություն է ձեռք բերում: Պատմական հուշարձանները մարզի տարածքում դասվում են տարբեր դարաշրջաններին՝ սկսած նախնադարյան շրջանի կրոմլեխներից՝ Սիսիանի շրջանում, մինչև ուշ միջնադարում կառուցված ամրոցներն ու վանքերը: Սյունիքի մարզի բնաշխարհի մեզ հասած բազմաթիվ պատմական հուշարձաններն իրենց վեհությամբ, դասական կանգուն և ավեր վիճակով կարող են զբոսաշրջության զարգացման նախապայմանների համակարգում մեծ նշանակություն ունենալ:

Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքները: Զբոսաշրջային ենթակառուցվածքն իրենից ներկայացնում է գործող հարմարությունների, արտադրողական, սոցիալական ու զբոսաշրջային նշանակության ճյուղերի համալիր, որոնք նշանակված են զբոսաշրջության ոլորտի զարգացման համար: Սյունիքի մարզի տարածքում առանձնացվում է զբոսաշրջային ինդուստրիայի բաղադրիչ մաս հանդիսացող երեք մակարդակից բաղկացած համակարգեր:

1) *Հյուրանոցները, հասարակական սննդի օբյեկտները.* Զարգացել են մասնավոր ձեռներեցության շնորհիվ: Հյուրանոցային ընկերությունները Սյունիքի մարզում մասնավոր տնտեսվարող սուբյեկտներ են, որոնց կառուցումն ու հետագա շահագործումը խրախուսվում է պետության կողմից: *Հասարակական սննդի հաստատությունների* ոլորտն այժմ պետական վերահսկողությունից դուրս է գտնվում և զարգացել է տարերայնորեն: Սյունիքի մարզում այս բնագավառում նույնպես պետական միջամտության կարիք կա:

2) *Տրանսպորտը և Կապը.* Համարվում են ենթակառուցվածքային կարևոր բաղադրիչներ: Սյունիքի մարզում վերջին տարիներին, էական փոփոխություններ և զարգացումներ են նկատվում ենթակառուցվածքային բաղադրիչների համակարգում: Բարելավումները հատկապես էականորեն նկատվում են ճանապարհային ցանցի համակարգում: Սյունիքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքում ծանրակշիռ տեղ ունի «Տաթևեր» ճոպանուղին, որի կառուցումից և շահագործումից հետո՝ զբոսաշրջիկների այցելությունները Սյունիքի մարզ ավելացավ: «Տաթևի դարպասներ» զբոսաշրջային գոտի այցելող զբոսաշրջիկների թիվը տարեկան ավելանում է 10–14%-ով՝ (նկ. 4):

3) *Գիդ-զբոսավարներ.* Այս ճյուղը ձևավորվել է դեռևս խորհրդային տարիներին և համեմատաբար քիչ է տուժել անցումային շրջանում: Այժմ

հաջողությամբ այս ճյուղը համագործակցում է ներգնա զբոսաշրջության տնտեսվարողների հետ:



Նկ. 4 «Տաթևեր» ճոպանուղու ուղևորների դինամիկան 2010-2014 թթ:

Գլուխ 3. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջության կազմակերպման վրա ազդող գործոնները:

Հանգստի և զբոսաշրջության կազմակերպման, ղեկավարման, պլանավորման վրա ազդում են բազմաթիվ, առանձնապես սոցիալ-տնտեսական նշանակության գործոններ: Պայմանականորեն դրանք բաժանվում են երկու մեծ խմբերի:

- Զբոսաշրջային գործունեության անհրաժեշտություն ծնող գործոններ,
- Հանգստի կազմակերպումն իրականացնող գործոններ

Զբոսաշրջային գործունեության կազմակերպման անհրաժեշտություն ծնող գործոններից կարևորվում են արտադրողական ուժերի զարգացումը, նյութական ապահովվածության բարձրացումը և բնակչության զարգացածության աստիճանը: Հանգստի կազմակերպման մեջ դրական գործոն է համարվում օտարերկրյա և տեղացի զբոսաշրջիկների ճիշտ փոխհարաբերությունները:

Զբոսաշրջային առաջարկն ու պահանջարկը:

Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, հայտնի են երեք հիմնական խմբեր՝ *ուղղակի, անուղղակի և շուկայական: Ուղղակի գործոններից* են համարվում՝ ֆինանսական ներդրումները զբոսաշրջության բնագավառում, մուտքի և ելքի պարզեցված պայմանների ստեղծումը, փոխադրումների ազատականացումը, անվտանգության ապահովումը: *Անուղղակի գործոններից* են՝ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ներդրումները զբոսաշրջային բոլոր

ենթակառուցվածքներում, որոնք անմիջական կապ չունեն զբոսաշրջության հետ, սակայն ազդում են պահանջարկի չափի և ծավալների վրա: *Շուկայական գործոնների* խմբում ներգրաված են՝ տարածքի բարենպաստ նկարագրի ձևավորումը, գովազդային գործունեության ծավալումը, զբոսաշրջային ապրանքի պահանջարկի և առաջարկի համակցումը, զբոսաշրջիկների պահանջմունքների ուսումնասիրումը և դրա հիման վրա շուկայի կարգավորումը: Սյունիքի մարզի զբոսաշրջության ոլորտում մրցակցությունը բավականաչափ սուր է և, ըստ էության, մոտ է կատարյալ մրցակցային դաշտի դասական սահմանմանը: Սյունիքի մարզի համար զբոսաշրջությունը տնտեսության եկամտաբեր ճյուղ կդառնա, եթե անգամ սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պայմաններում ճիշտ որոշումներ կայացվեն: Սյունիքի մարզի զբոսաշրջային տնտեսությունը պետք է իր ջանքերը և նյութական միջոցները կենտրոնացնի հետևյալ ուղղությունների վրա.

- Գովազդային նյութերի և տեղեկությունների տրամադրումն արտասահմանյան գործընկերներին՝ տեղում օգտագործելու նպատակով:
- Ճանաչողական, գործնական այցերի կազմակերպում Սյունիքի մարզ՝ արտասահմանյան գործընկերների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:

Զբոսաշրջային կլաստերների ձևավորման նախադրյալները: Ատենախոսության երեք ենթագլուխներում վերլուծվում է մարզի տարածքում զբոսաշրջային կլաստերների ձևավորման նախադրյալները: Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացմանը կարող են նպաստել այն տարածքները, որոնք իրենց մի շարք առավելությունների շնորհիվ առաջնային նշանակություն ունեն և կարող են հանդիսանալ զարգացման կենտրոններ: Մշակութային հուշարձանների և բնական տեսարժան վայրերի առկայության շնորհիվ, առանձնացվել են Սյունիքի մարզի հինգ զբոսաշրջային կլաստերներ: Կազմվել է գրավչությունների ցանկ, որտեղ ընդգրկված են Սյունիքի վարչական միավորների կարևոր զբոսաշրջային ռեսուրսները, տրված է դրանց համալիր բնութագիրն ու օգտագործման հնարավորություններն ըստ նպատակի և նշանակության: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ որպես զբոսաշրջային կլաստերներ կարելի է դիտարկել մարզի տարածաշրջանների գյուղական միավորումները, որոնք այդ առումով ունեն միմյանցից տարբերվող կողմեր: Սյունիքի մարզում զբոսաշրջության գրավչությունները համաչափ կարգով չեն բաշխված, քանի որ գրավչությունների տարածական բաշխումը կապված է պատմական բնութագրից, ռելիեֆի և կլիմայական պայմաններից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակից:

<u>Սիսիանի զբոսաշրջային կլաստեր:</u> Առանձնացված զբոսաշրջային կլաստերն իր սահմաններով՝ համապատասխանում է Սիսիանի նախկին վարչական շրջանին՝(նկ.5): Այստեղ գտվող 36 գյուղերից կլաստերի սահմաններում են ընդգրկվել 25 գյուղեր և Սիսիան քաղաքը: Սիսիանի կլաստերի տարածքում հայտնի են Զորաց քարերը, Ուխտասարի ժայռապատկերները և Որոտնավանքը: Բնության հուշարձաններից հայտնի

են Շաքիի ջրվեժը, Շամբի տաք աղբյուրները և Սև լիճը: Պետք է նշել որ մարզի մյուս կլաստերների հետ համեմատած զբոսաշրջային ակտիվների ծավալը փոքր է: Զբոսաշրջության հետագա զարգացմանը մարզի տարածքում խոչընդոտում են՝ Որոտնաբերդ, Բնունիս և Թանահաթ գյուղերի վատ վիճակում հայտնված սննդի, հյուրատների և գյուղական ճանապարհների ենթակառուցվածքները: Սիսիանի կլաստերում մասնագիտացված ուղղություններ կարող են համարվել էկոզբոսաշրջությունը, կրոնական, գիտաճանաչողական և սպորտային զբոսաշրջությունները:

Գորիսի զբոսաշրջային կլաստեր: Առանձնացվաց զբոսաշրջանային կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Գորիսի նախկին վարչական շրջանին: Այստեղ գտվող 27 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 8 գյուղեր և Գորիս քաղաքը: Գորիսի տարածաշրջանն աչքի է ընկնում բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսների հարուստ բազմազանությամբ, որոնք իրենց ամբողջությամբ արտահայտում են այս կլաստերի համապարփակ պատկերը՝(նկ.6): Այն արտահայտվում է բնապատմական հուշարձանների յուրատիպությամբ և ազգային մշակութային առանձնահատկություններով: Գորիսի զբոսաշրջային կլաստերի ներուժն առավել մեծացավ հատկապես Խնձորեսկի «Ճոճվող» կամրջի կառուցմամբ, որն արտահայտվում է զբոսաշրջիկների հոսքի տարեցտարի թվի ավելացմամբ: Հին Խնձորեսկի ողջ տարածքը կարող է վերածվել բացօթյա թանգարանի, քանի որ գոյություն ունեն նախադրյալներ, որոնք կնպաստեն հետագա զբոսաշրջային հոսքերի ավելացմանը: Գորիսի կլաստերում մասնագիտացված ուղղություններ կարող են համարվել պատմամշակութային, էկոզբոսաշրջային, գիտաճանաչողական և գյուղական զբոսաշրջությունները:

Տաթևի զբոսաշրջային կլաստեր: Առանձնացված այս տարածքը իր սահմաններով ընդգրկում է Տաթև գյուղը և շրջակա 11 գյուղերը՝(նկ.6): ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման նոր մոտեցման մշակման գործում այստեղ իրացվեց խոշորագույն ռազմավարական նշանակության ծրագիր՝«Տաթևեր» ճոպանուղու կառույցով: Անցած հինգ տարիների փորձը ցույց տվեց, որ «Տաթևեր»-ը ՀՀ հաջողված ծրագրերից է:

Կապանի զբոսաշրջային կլաստեր: Այս կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Կապանի նախկին վարչական շրջանին՝ (նկ. 7): Այստեղ գտվող 42 գյուղերից կլաստերի սահմաններում են ընդգրկվել 31 գյուղեր և Կապան քաղաքը: Տարածաշրջանն հարուստ է բնապատմական զբոսաշրջային ռեսուրսներով, որոնցում առկա ենթակառուցվածքները արտահայտում են այս կլաստերի ամբողջական պատկերը: Լեռնային ռելիեֆն ու անտառային վերընթաց լանդշաֆտը մեծ ներուժ ունեն արկածային, գիտաճանաչողական և վրանային զբոսաշրջության կազմակերպման համար: Շիկահողի պետական արգելոցը իր նշանակությամբ եզակի տարածք է համարվում՝ ԱՊՀ երկրների շարքում, որտեղ պահպանվում են բնական սոսիների ամենաընդարձակ անտառները: Զբոսաշրջային կլաստերի սահմանում գտնվող Վահանավանքի շրջակայքում էկոլոգիական

վիճակը պահպանելու նպատակով առաջարկվում է իրականացնել բարեկարգման աշխատանքներ:

Մեղրիի զբոսաշրջային կլաստեր: Մեղրիի զբոսաշրջային կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Մեղրու նախկին վարչական շրջանին՝ (նկ. 8): Այստեղ գտվող 13 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 9 գյուղեր և Մեղրի քաղաքը: Մեղրիի տարածաշրջանն ունի զբոսաշրջային մեծ ներուժ, որը ձևավորվում է բնական և մարդածին զբոսաշրջային բազմազան ռեսուրսների համադրման արդյունքում: Մեղրիի զբոսաշրջային կլաստերը Կապանի, Սիսիանի և Գորիսի զբոսաշրջային կլաստերներից տարբերվում է բնակլիմայական առանձնահատկություններով և առավել ծայրամասային սահմանամերձ աշխարհագրական դիրքով: Մեղրիի տարածաշրջանն անմիջական սահմանակցում է Իրանին, հետևաբար կարելի է միանշանակ նշել, որ անհրաժեշտ է զարգացնել բազմաճյուղ ներգնա զբոսաշրջություն: Լինելով ծայրամասային տարածաշրջան, այստեղ զգացվում է զբոսաշրջային ենթակառուցվածքների լուրջ անկատարություն, որը թերևս լրացվի այս տարածաշրջանի զարգացման համապարփակ ծրագրում: Այն մշակվել է ՀՀ կառավարության կողմից և ըստ այդմ նախատեսվում է ստեղծել ազատ տնտեսական գոտի ու զարգացնել ժամանցային զբոսաշրջություն:


ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
կենտրոնը՝ ք.Սիսիան
Մասշտաբ 1:300 000
Սիսիան
Դարաս
Տեղ
Ստեփանավան
Սարավանք
Սարավանքի ջրամբար
Սարդարապատ
Սարդարապատի ջրամբար
Ալավերդի
Ալավերդի ջրամբար
Ալավերդի Հարավային
Ալիսլեր
Ալիսլերի ջրամբար
Ալիսլերի Հարավային
Ալիսլերի Հյուսիսային
Ալիսլերի Արևելյան
Ալիսլերի Արևմտյան
Ալիսլերի Ջրբաժան
Ալիսլերի Ջրբաժանի ջրամբար
Ալիսլերի Ջրբաժանի Հարավային
Ալիսլերի Ջրբաժանի Հյուսիսային
Ալիսլերի Ջրբաժանի Արևելյան
Ալիսլերի Ջրբաժանի Արևմտյան
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժան
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի ջրամբար
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի Հարավային
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի Հյուսիսային
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի Արևելյան
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի Արևմտյան
Ալիսլերի Ջրբաժանի Ջրբաժանի Ջրբաժան
Ալիսլերի Ջրբաժան



Նկ. 7 Կապանի տարածաշրջանի առաջարկվող կլաստեր



Նկ. 8 Մեղրիի տարածաշրջանի առաջարկվող կլաստեր

Մեր կողմից իրականացվել է վերը նշված 4 վարչական շրջանների զբոսաշրջային կլաստերների ուժեղ և թույլ կողմերը տրվել են հնարավորությունների ու սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծությունները: Զբոսաշրջային գրավչությունների նմանատիպ քննարկումն ու արժևորումը հնարավորություն են ստեղծում զբոսաշրջության զարգացման նոր ծրագրերի իրականացման համար:

Գլուխ 4. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Գյուղական համայնքային զբոսաշրջության հայեցակարգը: Քննարկվել է զբոսաշրջության ամենահայտնի տեսակներից գյուղական համայնքների վրա հիմնված զբոսաշրջությունը: Սյունիքի մարզում կարող են գործել մեր կողմից առաջարկված *գյուղական զբոսաշրջության երկու տարբեր մոդելներ,* որոնք առանձնացվում են համայնքի բնակչության ներգրավվածության աստիճանով և մասնակցության ձևով.

- Ողջ համայնքը ներգրավված է ծրագրում
- Համայնքի կամ ընտանիքների մի մասն է ներգրավված ծրագրում

Գյուղական զբոսաշրջությունն չի պահանջում մեծ զբոսաշրջային կազմակերպությունների ստեղծում, այլ հանդիսանում է մասնավոր գյուղական տնտեսությունների կամավոր միավորման արդյունք: Մեծ նշանակություն է տրվում գյուղական համայնքների զբոսաշրջության

համար *պետական հայեցակարգի անհրաժեշտությանը*: Գյուղական համայնքային զբոսաշրջությունն ի տարբերություն քաղաքային և մշակութային զբոսաշրջությունների դեռևս ետ է մնում:

Զբոսաշրջությունը գյուղական համայնքի տնտեսական զարգացման միջոց: Մարզում առկա զբոսաշրջային ռեսուրսների նպատակային օգտագործման շնորհիվ երաշխավորվում են եկամուտների և աշխատատեղերի ստեղծում գյուղական համայնքներում, որից շահում են ոչ միայն գյուղերում առկա հյուրատները, այլ նաև շատ այլ ձեռնարկություններ, օրինակ՝ արհեստագործությունը, առևտուրը, սննդի արդյունաբերությունը: Վերջիններս ստեղծում են զարգացած գյուղական ենթակառուցվածքներ և տարածքն աստիճանաբար դառնում է ավելի հրապուրիչ և բարձրանում է կյանքի որակը գյուղում: Այդ նպատակով առաջարկվում է զբոսաշրջության ոլորտում պետական հայեցակարգի հետևյալ նպատակները՝ տարածքի նոր նախագծված պլանավորում, երիտասարդ կադրերի ներգրավվում, փոքր բիզնեսի խրախուսում, մրցակցային դաշտի ապահովում և այլն: Թույլ ենթակառուցվածքներով շատ շրջաններում զբոսաշրջությունը երաշխիք է հետագայում կարևոր ենթակառուցվածքների ստեղծմանը՝ դրա օրինակը «Տաթևեր» ճոպանուղին է:

Գյուղական համայնքներում զբոսաշրջության պլանավորման հիմնական փուլերը: Հայաստանի զբոսաշրջային տարբեր կազմակերպությունները, շատ հաճախ ելնելով իրենց նեղ շահերից, չեն համագործակցում միմյանց հետ, ինչը մեծապես խոչընդոտում է ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացմանը: Ներկայումս առաջ է քաշվել համամրցակցություն նոր կարգախոս տերմինը, որը իր մեջ ընդգրկում է ՀՀ տարբեր մարզերի և կազմակերպությունների միջև զբոսաշրջային ոլորտի ավելի սերտ համագործակցություն: Սյունիքի մարզում գյուղական զբոսաշրջային ինդուստրիայի պլանավորման մեջ կարևորվում են մի քանի գործընթացներ որոնցից են՝ զբոսաշրջության արդյունքի բնութագրում, հիմնական միջոցների գույքագրում, շուկայի վերլուծություն, միջազգային կապերի հաստատում, տեղեկատվական և գովազդային կարգախոսները:

Տեղական ինքնակառավարման մարմինները և զբոսաշրջության կազմակերպումը: Սյունիքի մարզում կայուն զբոսաշրջության հաստատման համար մեծ նշանակություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինների գործնական վերաբերմունքը, որոնք պատասխանատվություն են կրում գլխավոր ենթակառուցվածքների համար, առանց որոնց զբոսաշրջությունը չի կարող զարգացում ապրել: Քանի որ զբոսաշրջությունը ոչ արտադրական ոլորտ է, ուստի գործարարներն ու բանկերը հաճախ հրաժարվում են համագործակցելուց, կանխիկ ներդրումներ կատարելուց: Սակայն զբոսաշրջության զարգացումը պարունակում է «հետադարձ ներդրումով» նախագծեր, որի արդյունքում ֆինանսավորողները ունենում են ավելի հաստատուն ապահովվածություն, քան այլ արտադրական ներդրումներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սյունիքի մարզի *բնակավայրերի գերակշիռ մասը՝(ընդհանուր 135 բնակավայրից 105-ը) համարվում է* սահմանամերձ ու բարձր լեռնային:

Զբոսաշրջային ծառայությունների փաթեթի կազմումը: Քննարկվել է զբոսաշրջային փաթեթի բովանդակությունը, որոնցից կարևորվում են՝ Սյունիքի մարզում տեսարժան վայրերն ու դրանց աջակցող ծառայությունները: Զբոսաշրջության արդյունավետ զարգացմանը նպաստում են նյութատեխնիկական բազայի առկայությունը, որի մեջ են դասվում լեռնային ու ջրային տարածքները, բնական լանդշաֆտները, պատմա-մշակութային հուշարձանները: Սյունիքի մարզի զբոսաշրջային ինդուստրիայի համար մյուս կարևոր ուղղությունը համարվում է զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծառայությունների գնահատումը, որոնցից են՝ փոխադրամիջոցներ, կացարաններ, սննդի ծառայություններ, առևտրական կետեր և այլն: Սյունիքի մարզի համայնքային զբոսաշրջության կազմակերպման ժամանակ վերլուծության ենթարկելով վերը նշված զբոսաշրջային ծառայությունները, կարելի է նվազագույնի հասցնել հետագա բացասական ազդեցությունները և առավելագույնի՝ դրականը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զբոսաշրջությունը ճանաչվել է ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որը նպաստում է մարզերի կայուն զարգացմանը: Սյունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսների, զբոսաշրջության զարգացման, սոցիալ-տնտեսական նշանակության համալիր ուսումնասիրություններից ստացված արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները.

- Սյունիքի մարզի հարուստ բնական, մարդածին զբոսաշրջային ռեսուրսները և ենթակառուցվածքները նպաստավոր պայմաններ են ստեղծում բազմաճյուղ զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման համար:
- Սյունիքի մարզի տարածաշրջաններում (Սիսիան, Գորիս, Կապան և Մեղրի) ֆինանսական ներդրումներն ունեն զբոսաշրջային ինդուստրիայի կայացման հետագա զարգացման միտում, և կարող են ապահովել ֆինանսական միջոցների արագ վերադաձ: Առաջին օրինակը «Տաթևեր» ճոպանուղու առկայությունն է:
- Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը Սյունիքի մարզում կստեղծի նոր աշխատատեղեր ոչ միայն բուն զբոսաշրջության ոլորտում, այլ նաև այն սպասարկող տնտեսության բազմաթիվ ճյուղերում՝ նպաստելով բնակչության եկամուտների ավելացմանը:
- «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքը կնպաստի Սյունիքի մարզի տրանսպորտաաշխարհագրական դիրքի բարելավմանը, ինչպես նաև կնպաստի ՀՀ, ԼՂՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև զբոսաշրջային կապերի զարգացմանը:
- Սյունիքի մարզի առաջարկված զբոսաշրջային կլաստերները ունեն տարբեր նշանակության բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսներ, որոնց նպատակային և պլանավորված օգտագործումը դրական ազդեցություն կունենա համայնքի եկամուտների ավելացման և բնակչության կյանքի որակի բարձրացման համար:

- Կլաստերների առանձնացումները կնպաստեն զբոսաշրջային ինդուստրիայի հետագա զարգացմանը, որոնցում առկա ռեկրեացիոն ռեսուրսները լիարժեք կոգտագործվեն:
- Գյուղական համայնքների զարգացումը բարենպաստ պայմաններ կստեղծի զբոսաշրջության և գյուղատնտեսության ճյուղերի զարգացման համար:

Առաջարկություններ՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության՝ Սյունիքի մարզի համար առաջարկված մեթոդաբանությունը կիրառել ՀՀ այլ մարզերի զբոսաշրջային գործընթացներում:
- Սյունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարներին առաջարկված կլաստերների սահմաններում իրականացնել բարեկարգման աշխատանքներ հատկապես զբոսաշրջային ենթակառուցվածքներում՝ (հյուրատներ, սննդի օբյեկտներ և գյուղական ճանապարհների բարեկարգում):
- ՀՀ մշակույթի նախարարությանը և Սյունիքի մարզպետարանին առաջարկված զբոսաշրջային կլաստերների սահմաններում իրականացնել պատմամշակութային հուշարձանների բարեկարգման աշխատանքներ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրատարակված է հետևյալ գիտական հոդվածներում

1. Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի բնական հուշարձանները և նրանց պահպանման խնդիրները: Ալպ-Հիմալայան լեռնային գոտու աշխարհագրական և երկրաբանական հարցերը (Ս.Պ. Բալյանի 95 ամյակին նվիրված հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Երևան 2007 – էջ 456-461:
2. Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի ռելիեֆի ձևաչափական վերլուծությունը: ԵՊՀ, Գիտական տեղեկագիր 3, Երևան 2007.- էջ 140-146:
3. Դուրգարյան Է.Ռ. Ռելիեֆի համեմատական գեղագիտական ուսումնասիրության մասին՝ Ալպերի, Զանգեզուրի օրինակով: Կիրառական Երկրաբանության և Աշխարհագրության արդի հիմնահարցերը Պրոֆեսոր Պերճ Բոշնաղյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան 2011.- էջ 120-125:
4. Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի բնական պայմանները որպես բնակչության առողջության գործոն: Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը (Լ.Հ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը), ԵՊՀ, Երևան 2011.- էջ 273-279:

5. Դուրգարյան Է.Ռ., Թորոսյան Մ.Մ. Զբոսաշրջության տարածքային կազմակերպման վրա ազդող գործոնները: Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, Երևան 2014.- էջ 95-98:
6. Թորոսյան Մ.Մ., Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի ենթակառուցվածքների վերլուծությունը: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնահարցերը, հանրապետական գիտաժողովի նյութեր, ԵՊՀ, Երևան 2015.- էջ 342-345:
7. Դուրգարյան Է.Ռ. Գյուղական զբոսաշրջության հայեցակարգը ՀՀ Սյունիքի մարզում: «Հայկական լեռնաշխարհ», հանրապետական գիտաժողովի նյութեր (Նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին), ՀՊՄՀ, Երևան 2015.- էջ 255-263:

ДУРГАРЯН ЭЛИЗА РАФИКОВНА
АНАЛИЗ И ОЦЕНКА ГЕОГРАФИЧЕСКИХ ФАКТОРОВ В ЦЕЛЯХ РАЗВИТИЯ ТУРИЗМА (НА ПРИМЕРЕ СЮНИКСКОГО МАРЗА РА)

РЕЗЮМЕ

Туризм признан одним из приоритетных направлений деятельности хозяйств РА, который способствует сбалансированному развитию марзов.

Полученные автором результаты комплексного исследования туристических ресурсов Сюникского марза позволили сделать следующие основные выводы и предложения:

- Богатые природные, антропогенные туристические ресурсы и инфраструктуры Сюникского марза создают благоприятные условия для развития многоотраслевой туристической индустрии.
- Финансовые внедрения в административные обьединения и населенные пункты Сюникского марза (Сисиан, Горис, Капан и Мегри) имеют тенденцию становления, укрепления и дальнейшего развития туристической индустрии и способствуют обеспечению досрочного возврата внедренных финансовых средств. Первым примером этого является существование канатной дороги "Татевер".
- Развитие индустрии туризма в Сюникском марзе создает новые рабочие места в том числе и в смежных отраслях обслуживающих хозяйств, способствуя улучшению жизненного уровня населения.
- Дорожный коридор "север-юг" будет способствовать улучшению транспортно-географического положения Сюникского марза, а также туристических связей между РА, НКР и Ираном.
- Общины и населенные пункты Сюникского марза имеют природные и антропогенные туристические ресурсы, целенаправленное использование которых приведет к увеличению доходов общин и повышению уровня жизни населения.
- Предложенное разделение кластеров будет способствовать дальнейшему развитию туристической индустрии, и рекриационные ресурсы будут использованы полностью.
- Развитие сельских общин будет способствовать не только развитию туризма, но и отраслей сельского хозяйства.

<u>ПРЕДЛОЖЕНИЯ:</u>

- Управлению туризма при Министерстве экономики РА использовать предложенную методологию для Сюникского марза в туристических исследованиях других марзов РА.
- Руководителям сельских общин Сюникского марза осуществить в пределах кластеров благоустройство туристических инфраструктур (в частности,

создание новых гостиничных домов, обьектов питания, и улучшение состояния сельских дорог).

- Организовать работы по благоустройству историкокультурных памятников в пределах предложенных туристических кластеров.

DURGARYAN ELIZA RAFIK
THE ANALYSIS AND ASSESSMENT OF GEOGRAPHICAL FACTORS FOR THE DEVELOPMENT OF TOURISM (BY EXAMPLE OF SYUNIK REGION IN THE RA)

SUMMARY

Tourism is recognized as one of the priorities of the RA, it can become an important sphere of the national economy and promote balanced regional development.

The results of complex study of the tourism resources of Syunik region and the development of tourism, its social-economic importance led to the following conclusions and proposals:

- Rich natural and anthropogenic tourism resources, necessary infrastructure of Syunik region create favorable conditions for the development of diversified tourism industry.
- Financial investments in administrative associations and settlements of Syunik have a tendency of establishment, strengthening and further development of the tourism industry and provide to ensure the early return of funds introduced. The first example of this is the existence of " Tatever ".
- The development of the tourism industry in Syunik region creates new jobs not only in the field of tourism, but also in related fields, contributing to the improvement of living standards of population.
- The "North-south" highway corridor will improve transportation-geographical position of Syunik region and will contribute to the development of tourism relations among the RA, the NKR and the Islamic Republic of Iran.
- Communities and settlements of Syunik region have natural and anthropogenic tourism resources of different value, purposeful use of which will contribute to increase the income of the community and to raise living standards.
- Separation of clusters will contribute to the further development of the tourism industry and existing recreation resources will be completely used.
- Community development contributs not only to the further of tourism, but also to the agriculture.

Proposals

- The Tourism Department of the Ministry of Economy is recommended to apply the methodology which has been improvement in Syunik region in other regions for carring out similar studies.
- The heads of rural communities of Syunik region are proposed to apply renovation works for the tourism infrastructure, particularly, hotels, catering facilities and the improvement of rural roads within the framework of proposed clusters.
- The Ministry of Culture and the administration of Syunik region should carry out the renovation works of historical and cultural monuments within the framework of proposed tourism clusters.